# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 15-Ն

«26» փետրվարի 2018 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը

«Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով»:

«2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2017 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի»: